

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Արդարադատության նախարարության աշխատակազմ մուտք եղած քաղաքացիների դիմում-բողոքների ընթացքի վերաբերյալ

2011թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քարտուղարություն մուտքագրվել է քաղաքացիների **3263** դիմում-բողոք (2010-ին՝ **2796** դիմում-բողոք), այսինքն՝ 2010 թվականի համեմատ դիմում-բողոքների թիվը 2011 թվականին աճել է **16,7** տոկոսով, որից՝

1. **1731** դիմումների ընթացք է տրվել օրինականության վերահսկողության տեսչության կողմից, որը 2010 թվականի համեմատությամբ ավել է **6,6** տոկոսով (2010-ին՝ վերահսկողության վարչության կողմից պատասխանվել է **1623** դիմումների), որից՝

- **627-ը՝** բողոքներ դատական համակարգից, որոնց ուսումնասիրության արդյունքում հարուցվել 7 կարգապահական վարույթ, որից՝ 2-ով միջնորդություն է ներկայացվել արդարադատության խորհրդին դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, 5-ը՝ ընթացքում է,
- **306-ով** վիճարկվել է նոտարի կողմից կատարած գործարքների օրինականությունը, որոնց ուսումնասիրության արդյունքում 5 նոտարի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ և ենթարկվել են կարգապահական պատասխանատվության,
- **482-ը՝** բողոքներ ԴԱՀԿ և ՔԿ ծառայություններից,
- **43-ը՝** իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից իրականացված գրանցումների ժամկետները ձգձգելու կամ գրանցումները մերժելու մասին,
- **12-ը՝** ՔԿԱԳ մարմիններում անվան կամ ազգանվան փոխման գրանցումները մերժելու մասին,
- **261-ը՝** այլ բնույթի, որոնց պատասխանվել է, որ դուրս է «Արդարադատության նախարարության իրավասությունից և խորհուրդ է տրվել դիմելու համապատասխան մարմինների:

2. **159** դիմում-բողոքների ընթացք է տրվել ՔԿԱԳ գործակալության կողմից, որը 2010 թվականի համեմատությամբ պակաս է **31,1** տոկոսով, (2010-ին Գործակալության կողմից ընթացք է տրվել **231** դիմումների), որոնք հիմնականում վերաբերում են ՔԿԱԳ տարածքային մարմինների կողմից իրականացված գրանցումների կամ մերժումների օրինականությանը, իսկ մոտ 35 %-ը՝ քաղաքացի և ՔԿԱԳ տարածքային մարմին փոխհարաբերություններին և սպասարկման որակին:

3. **78** դիմում-բողոքների ընթացք է տրվել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, որը 2010 թվականի համեմատությամբ ավել է **24,3** տոկոսով, (2010-ին Գործակալության կողմից ընթացք է տրվել **59** դիմումների), որոնք վերաբերել են սպասարկման որակին, ժամկետներին և գրանցումների անհիմն մերժումներին:

4. «Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից ընթացք է տրվել նաև Աշխատակազմում քաղաքացիներից

ստացված **259 (2010-ին՝ 239)** և դատապարտյալներից ստացված **139 (2010-ին՝ 221)** դիմում-բողոքների, որը 2010 թվականի համեմատությամբ պակաս է **13,5** տոկոսով, որից՝

դիմումի բնույթը	քաղաքացիներից ստացված		դատապարտյալներից ստացված	
	2011	2010	2011	2010
պայմանական վաղաժամկետ ազատման	90	80	72	60
ներում շնորհելու	8	5	8	8
բուժօգնության	40	20	8	37
այլ քչ հիմնարկ տեղափոխելու	102	97	35	77
այլ	19	27	16	39

5. ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության կողմից ընթացք է տրվել նաև Աշխատակազմում քաղաքացիներից ստացված **488 (2010-ին՝ 423)** դիմում-բողոքների, որը 2010 թվականի համեմատությամբ ավել է **15,3** տոկոսով, որոնց հիմնական մասը վերաբերել է կատարողական վարույթների ձգձգմանը և վտարման գործընթացները կանխելուն, ինչպես նաև վիճարկվել են աճուրդների գործընթացը:

6. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մյուս ստորաբաժանումների կողմից **203** տարաբնույթ դիմումների վերաբերյալ տրվել են պարզաբանումներ, **20** դիմումներով՝ տեղեկատվություն, ինչպես նաև **186** դիմումներ վերահասցեագրվել են պետական տարբեր մարմիններ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավասություններից դուրս լինելու հիմնավորմամբ: